Պարույր Սևակ

Միջակետի կարիք

Ես՝ հաբեշի ու նեգրի պես սևամորթը,
Ինձ ժպտացող ատամներիդ փղոսկրի
Լուսեղ փայլից ճերմակել եմ կարծես հիմա…
Ես՝ բառերի խոշորածախ վաճառորդը,
Սնանկացած եմ ինձ զգում քո խոսքերից,
Որ մանրամաղ անձրևի պես սողոսկելիս
Չե՞ն հարցընում թույլտրվություն,
Տեղ չե՞ն խնդրում իրենց համար:
Իսկ խոսում ես… հազա՞ր ու մի դատարկ բանից.
Թե չես սիրում ձմեռ ու թութ,
Թե պաշտում ես լեռ ու ամառ,
Թե դժգոհ ես քո նոր շորի նեղ գրպանից,
Թե կինոյում մեկն ինձ շատ է նման եղել,
Թե ինչ լավ է, որ չեմ պահում կյանքում բեղեր,
Թե… վերստին ետ ես դառնում շոր ու կարին
Կամ երազում, որ «չորսերրդ» դառնան «հնգեր»
Եվ… չես զգում, որ - հրաշքո՞վ – տասը տարին
Մե՛կ վայրկյանում ուսերիցըս վայր է ընկել:
Ու չե՞մ զգում…
Շարունակում ես բլբլալ,
Ծիծաղում ես դատարկ բանից,

Դատարկ բանից պատրաստ ես լալ.
Հարց ես տալիս,
Զարմանալի հստա՞կ հարցեր
Եվ մեջընդմեջ… պաչպչում ես,
Պաչպչում ես այնպես, կարծես
Քո հապշտապ բլբլոցն ես կետադրրում…
Քո հապշտապ բլբլոցն ես կետադրրում դու մերթ ընդ մերթ,
Եվ չգիտես, որ անհամբեր միջակետի եմ սպասում՝
Երկարատև՞ - շարունակվո՞ղ մի համբույրի:
Եվ չգիտես,
Որովհետև թեպետ արդեն տասը տարին
Մեկ վայրկյանում ուսերիցըս վայր է ընկել՝
Դարձել եմ քեզ հասակակից ու դասընկեր,
Սակայն ունեմ տարիքային մի թուլություն.
Համբույրի և պաչի միջև
Դեռ դնում եմ տարբերություն…

13.VII.1958թ. 23.XII.1959թ.
Մոսկվա Թիֆլիս